

Երաժշտություն նկարողը



-Չոգեվիճակ, մտածողություն, աշխարհայացք՝ ամեն ինչ է արվեստը, մեկ բառով չի բացատրվում:

Դատարկ միջանցքներն ու լռությունը հուշում են, որ էլի ուշացել են դասից: Կամաց բացում են լսարանի դուռը: Սիրուն լռություն է: Միայն խզխզոց է լսվում արվեստանոցում, որտեղ առավոտվա լույսն ավելի քան կինեմատոգրաֆիկ է, ու ինձ ինչ-որ ֆիլմ է հիշեցնում, որ դեռ չեմ նկարել:

Կան բաներ, որոնք ոչ կաղորդ, ոչ էլ բառերով փոխանցել չեն կարող, ու հիմա այդ վիճակն է, որ ուզում ես զգալ միևնույն վերջ: Ուսանողները նկարում են:

Չոգեվիճակ, զարդագործ Արտյոմ Սարգսյանի արվեստանոցում են, ու ծավալվում է գրույցը...

-Դասախոսն ուսանողին տալիս է 10%, մնացածը ուսանողինն է: Նկարել ոչ ոքի չեն սովորեցնում: Սովորեցնում են գրագիտություն, մնացածն ուսանողն անելով պիտի առաջ գնա: Մշակույթն է մեր ազգը պահողը, բայց հիմա խոցելի տեղում է: Պետք է լուրջ և մտածված մոտենալ արած աշխատանքներին: Որքան թերի է գիտակցությունը, այքան ավելի են զարգանում բնագոյալինը, կենդանականը: Այսպիսով իշխում են թշնամությունը, զազանությունը, այլասերվածությունը, նյութականությունը՝ ճնշելով հոգևոր արժեքները... Բիարկե, արարում են քո ոգու միջինը, քո աշխարհը, քո տեսածն ու զգացածը, և ամենակարևորը՝ երբ սկսում են քո էությունը ճանաչել, հասկանում են գերճշարտությունը՝ էութենականը: «Գոյության նպատակն ու իմաստն է՝ ձգտել հայտնի սահմաններից դուրս՝ դեպի վեր, և օգնել միմյանց»: Կյանքի իմաստը ինքնակատարելագործումն է, դպրոցի նպատակն էլ պետք է լինի՝ ստեղծել պայմաններ յուրաքանչյուրի ինքնակատարելագործման համար: Այսինքն՝ բոլոր ժամանակներում մարդը ձգտել է գերություն և էություններ ճանաչել, առավել ևս այս խառնիճաղանջ օրերին:

-Մի քիչ լսարանում շրջելուց հետո հասկացա, որ իմ դասից արդեն բավական ժամանակ անցել է: Մեր լսարան մտնելիս սեղանին նկատեցի մի հետաքրքիր կուլտ: Քանի որ ուշացել էի, միանգամից տեղավորվեցի ու ողջ դասի ընթացքում միտքս կտրվում ու գնում էր դեպի կուլտը, որն ինձ ինչ-որ բան էր ուզում ասել: Պիկասոն էր, չէ՛, հաստատ մի բան խառնում են: Դասն ավարտվեց: Աշխատանքից ուշանում են ու միակ բանը մտքումս մնացած նկարն էր՝ կուլտը, որն ինձ հետապնդեց մինչև հաջորդ օրվա առավոտ:

Չաջորդ օրը հետապնդող կուլտը կախված էր պատին ու մեմակ չէր: 6 գործ ընդհանուր ձեռագրով կախված էր լսարանում: Չեղիմակը գյուլների արվեստագետ Արտյոմ Սարգսյանն է, որի լսարան-արվեստանոցում էի մեկ օր առաջ: Ամեն բան տեղն է ընկնում, բայց այդ նկարը կպել է սրտիս: Չամիդայեցի Արտյոմի հետ. հետաքրքիր է, երբ չգիտես հեղինակին, չես ճանաչում ու ուզում ես իմանալ նրա ով լինելը, որովհետև գործն անչափ տպավորվել է մեզի:

-Ինչպե՞ս տեղի ունեցավ Արտյոմի ու նկարչության առաջին հանդիպումը:

-Արվեստի հանդեպ իմ սերն ու նա-

խասիրությունը ի հայտ են եկել դեռ 3 տարեկանից: Այդ տարիքից սկսել են նկարել պատերի վրա: Ուսման զուգահեռ՝ սկսել են հաճախել Գյումրու Մերկուրովի անվ. գեղարվեստի դպրոց: 1996թ. գորակոչվել են ծառայության ԳՀ Պաշտպանության բանակում, այդ ընթացքում զբաղվել են քարտեզագրությամբ: Չորացրվելուց հետո ընդունվել են ԳԳՊԱ Գյումրու մասնաճյուղ: Շնորհիվ հորս, որը նույնպես արվեստի մարդ է, ժամանակի ընթացքում կարողացա ավելի ու ավելի հղկել ու զարգացնել իմ մեջ եղած շնորհը: Հիմնականում տարված էի մետաղյա գործիքներով. ինձ միշտ հետաքրքրում էր դրանք ինչպե՞ս են պատրաստվել, ինչ նյութերով, ում կողմից: Հենց սա էլ երևի ճանապարհի հարթեց իմ հետագա ստեղծագործության համար, ու սկսեցի պատրաստել բրենդային մետաղյա տարբեր տեսակի զարդեր: Մասնագիտությամբ լինելով գեղանկարիչ՝ իմ ստեղծագործությունների հունքը դարձան բնական նյութերը և արդյունքում կարողացա յուրովի ստեղծագործել և այդ ստեղծագործության մեջ ներդնել իմ աշխարհընկալումն ու զգացմունքայնությունը:

-Ո՞վ է ազդել Ձեր նկարչական ոճի վրա:

-Շատերից են դաս առել. Յոդիկ Աբրահամյան, որն իմ մեջ բացել է գույնը, Սիրգոյան Սերյոժա, Լաճիկյան Սամվել: Ակադեմիայում էլ՝ Վալերի Խաչատրյանը: Շատ նկարիչների են սիրում, որոնք ինձ համար հոգեհարկազատ են՝ Վան Էյլ, Վելասկես, Վան Գոգ, Սեզան, Կանդինսկի, Դեյդե Աշոտ, Գորկի, Պիկասո...

-Ո՞ր ոճը և ի՞նչ տեխնիկա եք նախընտրում

-Ոճի ընտրությունը կախված է հոգեվիճակից, թե ասելիքս ինչպես են փոխանցելու, երևի ավելի ավանգարդ, էքսիկ: Անընդհատ փոխվում է:

Աշխատում են խառը տեխնիկաներով՝ համադրելով տարբեր նյութեր. կարող է գործի վրա փայտ լինել, մետաղ, կաշի, հետո կաշվի վրա՝ նկարչություն:

-Ե՞րբ և ինչպե՞ս ծնվեց «Երաժշտական զգացողություն» շարքը:

-Շուկենի նոտաներն էի թերթում, հետո մի տեղ կարդացի, որ նա իր մատերի միացման հատվածները կտրել է, որ ավելի մեծ ակորդներ վերցնի: Կինս այդ ընթացքում Ռախմանինով էր նվագում: Ձեռքերին նայելիս երաժշտությունը եկավ մտքիս մեջ, սկսեցի նոտայի գրքի վրա գծել ինձնից անկախ, հետո կնոջս խնդրեցի նույն գործը կրկին նվագել, որ թղթի վրա էսքիզ անեմ, ստացա ռոյալի ոճավորված պատկերներ՝ ձեռքերը վերևում: Հիմքում իրական լուսանկար է, ձեռքերի լուսանկարը տեսնելուց հետո են ոգեշնչվել: Սրանք 2009թ. գործեր են: Հետո նոր միտք է եկել. նկարիչների մոտիվներով փորձել են այս շարքն անել: Երաժշտություն ու կերպարվեստ. այս երկու բացառիկ երևույթներն արվեստի ամենամուրթ, միևնույն ժամանակ ամենազգացիկ ոլորտներից են: Եվ կերպարվեստով, և՛ երաժշտությամբ արվեստագետը մարդկային հոգին բուժելու կամ կործանելու

նպատակով կարողանում է ստեղծել հզոր «զենք»: Համաշխարհային արվեստի պատմության մեջ հաճախ ենք հանդիպում այնպիսի նկարիչների, որոնք իրենց ստեղծագործության մեջ կարողացել են ընդգրկել նաև երաժշտությունը՝ ստեղծելով յուրատեսակ լեզու, որտեղ ավելի տեսանելի են դարձել մարդու ներքին ապրումներն ու զգացողությունները: Անշուշտ, այս վարպետությունը եղել է ժամանակի թելադրանքով և զգացողության ճիշտ ընկալմամբ: Այս գործերի մեջ այնքան ներքին զգացողություն կա՝ բառերով չեն կարող ասել: Դրանցում հոգեվիճակներ կան, որ զգացել են ու փորձել են անել ամենքս իր ձևի մեջ՝ Պիկասոն Պիկասո և այլն:

-Շարքն այսքանով ավարտվո՞ւմ է:

-Դեռևս յոթ գործ է, բայց դեռ շատ նկարիչներ կան. ես տեսնում եմ, որ կարող են լինել: Նկարների վերևի հատվածները տվյալ նկարիչների գործերն են, օրինակ, Գորկին հենց նույն ձևի գույն ունի՝ պատրաստած փայտից, Պիկասոն՝ սովորաբար կիթառ: Ես նույնությամբ արել եմ, իսկ մնացածն արդեն զգացողություններ են: Գորկու «Արորն ու երգ»-ը, Պիկասոյի «Կիթառ»-ը, կամ Մատիսի «Երաժշտություն»-ը, Կլեյնի «Հարմոնիա» գործը, ներքևում ռոյալի նոտաների հատվածը: Վերցրել են իրենց մոտիվներով, նայած դրանք ինչ ոճի մեջ կմատուցվեն, ինչպես էին տեսնում, ու փորձել են իրենցն իմ միջով անցկացնել:



-Փոքր-ինչ կխոսե՞ք Ձեր մյուս գործերի մասին:

-«Ձո՞ն Գորկին» տրիպտիխը նկարել են տատիս օժիտի կահույքի դռներից: Հետաքրքիրն այն է, որ կահույքին թվագրված է Գորկու մահվան թիվը: Երկրաշարժին կահույքի դռները կտրվել են, երեք դռների վրա են նկարել Գորկու գործերից, պատահական տեսա 48 թիվը՝ Գորկու ինքնասպանության թիվը, հիմա ուզում են կամոդ սարքել այդ դռներով: Ունեմ նաև այլ շարքեր՝ «Նարե» 2004-2005թթ., «Խաչքար», «Երկունք Ծիրանի»...

-«ART Design»-ը...

- 2010 թվականից եկել է զարդերի միտքը, դրանից առաջ էլ են սարքել, բայց 2010թ. հիմնեցի «ART Design» բրենդը. սկզբում թնոցներ, հետո տարբեր մետաղներ համադրելով փայտի ու ոսկորի հետ՝ սկսեցի զարդերով զբաղվել: Քանի որ արվեստանոց չունեմ, մեր տունն ամբողջովին վերածվել է արվեստանոցի, դրա համար ասելիքը զարդի մեջ է արտացոլվում, այս փոքր ֆորմայի մեջ: Օգտագործում են հայկական էլեմենտներ՝ գորգերի զարդանախշերից եկող: «Երկունք Ծիրանի»-ն սկզբում նկարների շարք է եղել, հետո նկարներից դետալներ կտրելուց փոքր կաշիներ ավելացան, մտածեցի՝ զարդ կլինի, ու սկսեցի զարդ էլ սարքել: Շատ դեպքերում զարդը հենց գործի վրա է փակցվել, կոնկրետ զարդ չի եղել, բայց այն դարձրել են գործի բաղկացուցիչ մաս:

-Կարծում եմ՝ ինքնատիպ մտահղացումները միշտ էլ կդառնան հետաքրքիր ստեղծագործություններ:





ՇՈՒՆ ԶԱՐԿՈՂ ՀԱՐՈՒԹԸ

Ըստ Ավետիք Դարբինյանի «Շուն գարկող Գարուբը» պատմվածքի մոտիվների

-Ես քաղքեն բան չբողի պակսի: Առավոտ լուսը կբացվի թե չէ, կմտածեմ ինչըդ էնեմ օր համ ճամպիտ դուզ եղնի, համ գործս, համ էլ պետք եղած վախտը գյուլ-լես ուզածդ ջրխող շանը գեղնին տա: Զըմը էսօր առավոտ կանուխ դեմ կնիկմարդ դուս էկավ, էն էլ դարտակ ձեռով: Ըսածի պես՝ ճանս ալչու չի կայնի: Օրն առավողնեմ է բայլու: Էսօր «Խեր, շառ, Աստված»-ը շառով չպրծնի: Զըմի կըսեք՝ գելոտ է, սնահավատ, բայց հորըս խոսքը կիչեմ՝ գարի գինը գարգյարը գիմանա: Ըբը իմացեք, է՛...Գիդեք հեշտ է՝ Աստու տված ամեն օր գարգել-գարգելոցի խաղալ: Շուն քրֆելով ապրել, բազի-բազի էլ շան քրֆածը եղնել, օրվա շան վերջին օռնոցը լսել. արևի վերջին շողերը ըղոր աչքերի մեջ ինչը՞դ կմարին, է՛դ մարելու ձեռը լսել...:

Ըբը՝ ամեն օրը ինչխոր թե իրա բաժին շունը կուզե: Մե լավ ընգերըմ ունիմ. շուտո՛ւնց չի տեսել: Էն օրը հանդըպավ, հարցրի՛ ինչը՞դ ես, Վո՛ր՝ ախպեր, էրթանք ուստա Կարոյի մոտ շանխոյն ուղեք, քեֆ ու հալը իմանամ...:

Ըսավ է՛, Գարուբ ջան, շունն էլ գարուն գելնի, հլը կաշվին հարցրո՛ւ... Դժվարցավ էս անտեր կյանքը պասպորտ չունեցող շների կյանքի պես:

Մտանք խաշխանեն, չանախ պատվիրի: Մինչև բերելը Վրզոն թե՛ -Յա՛, Գարուբ, իմացե՛լ ես՝ Գըռքաշ Կարոն ի՞նչ է էրե:

Ըսի՛ չէ՛, ի՞նչ է էրե:

Ըսավ՝ տասնհինգ օր առաջ էս Գըռքաշը գելնի, օր էրթա ծովափ յանի հանգստանալու: Ինքը քիչ է, շանն էլ հետը կտանի: Սամալյոտ մատելուց, շան պասպորտը կհարցնեն: Ըղոր շունը պասպորտ ունի. հըմը նկարը միջեն պոկվե, կորել է: Ըսիկ վնագ շան պասպորտի մեջ իրա նկարը կըկացնե ու կտանեն: Էնտեղ կամենի կաշեն, կըսեն՝ այ տղա, ըսիկ քու նկարդ է: Էս էլ թե՛ բան չկա, ըղորով յուլա գնացեք, մինչև շանն մորից նկարեն: Զինը կորել է:

-Կարոյից կհավատամ ըդպես բան ըսի:

Վզոն թե՛ ընչի՞ մըթընդար,

ախպեր ջան, հլը պատմե տեսնիմ՝ քու գործերդ ինչը՞դ եմ, դու ինչը՞դ ես:

Ըսի՛ ի՞նչ պատմեմ. բուր-տիքս կնայեմ. ամեն իսան իրա գործը գդել է ու գտածով կարի-կխնդա: Զըմ իմս մե քիչըմ ուրիշ է: Ըսիգ խնդում չէ. լեղի խնդում է: Ամեն գարգածս շան հետ աշքիս առաջ գուբա՛ ու կերթա ըղոնց պատկերասրահը: Զա՛, հա՛, պատկերասրահը (էս բա՛ռն ուրիցի միդս ընգավ): Կուզեմ հասկընամ՝ ըսոնք վերջին րոպեին իրանց շնային դիվարությունը ի՞նչ կմոռանեմ էս աշխրթի մասին, լավ ու վատի, բարու ու չարի...թե՛ ըդպես բաներ չեն մտածե:

Շուն գարգելով ապրելն ի՞նչ մեղքս է, օր էկավ կպավ ընծի: Զորս՝ Կըղկըղ Խաչոյի գործն էլ էր էդ: Մեմակ անտեր շներին կվերացներ: Զըմ մեջը մեծ իմաստություն կոներ ու կըսեր. «Աստուությունը չկայնի քաղքիս. ախր միշտ էլ տիրովին տերն է տարե, անտերին էլ...»:

Բայց դե էս գործը գեղնի վրա չբողի մնա: Մեր քաղքի մեջ ամեն փեշակ լավ անունի պես բան է: Շուն գարգելն էլ կըրնա իմ փեշա՛կս է: Կըսեմ բողի խոնարհի վիս գործի առաջ, օր բարձր-նաս. առաջ էրթա ըղորով: Բազի բանձր-բանձր կըմտածեմ՝ ծո շուն ախպըրտիք, ձեզոմով առաջ էրթալս ինչխոր ընգերով մահ էղնի: Զըմը ձեր պոչ խաղըցնելը իմաստ չունի, չնայած էս էլ խաղը ընպես՛ս կսիրեմ: Էն օրը խեղճ կնիգս գիտեր իրա հետ կխոսալի, ըսի, չէ՛, Քոչոյի՛ թոռ, գործիդ կեցի: Ինքն էլ թե՛ շների հետ մե քիչըմ խղճով էղի. մեզի հաց կուրան:

Ի՞նչ ըսեմ՝ ընծի միշտ կմեղադրեն ամենը հայվաններին սատկըցնելու մեջ. թող առաջ գա էն մեզը, օր էս շների կյանքն ընծեն ավելի կուզե...Թող առաջ գա ու ընծի քարովըմ գարգե: Բայց ես... Ես...ճիշտն ըսած, մտածել եմ. աշքս թաք՝ ըղոնց պոչերի վրա է... Ընչի՞՞ գեշ մարդ էղնիմ: Առանց էն էլ շան կյանք է իրանցն էլ, մերն էլ...:

Ամեն մե գարգած շան պոչի հըմար 8 մանեք կստանամ: Է՛, ես էլ փափախ կենեմ. շանը չեմ գարգե, պոչը կկտրեմ կհանձնեմ: Կերթամ էրեխոս բանըմ կամենիմ. խոսք եմ

տվե: Յոթը շան պոչի գնով մե լավ հեծանիվըմ գուբա. էրկու շաբաթից կըրնա առնեմ. տղես կուրխընա: Է՛, մեր հալն ըսպես է. գործը գործ, էրեխեն էրեխա, շան կյանքն էլ խո կյանք: Էս պետությանն էլ ըլը մտքիս մեջ կըսեմ շան պոչ՝ ձեզի: Ձեզի էս էլ է շատ: Մեր ժողովուրդը էս երկրի մեջ էնքա՛ն է տանջված, օր շան քթեն շուր կխմե ախր: Ան, օրինակ, առավող կանուխ դարտակ ձեռով դեմըս ելածը կնիկը՝ մեր մայրի Արուսը. լավ էլ ամուն են դրել՝ Զիբիլոնցի թագուհի: Ասու ամեն առավոտ, էրգուակնանի կաշկովըմ, էրկու գզվող շուն հեղկեն քցած կերթա քոչոցի: Ի՞նչ ըսես կտոնի՛ մանդր-մունդր բաներեն (չուլ ու չափուզ, դարտակ շիշ) մինչև ահագին թանգոնց բաներ: Զավատալու՛ բան է, օր քոջ ու փալատով փաթեթած գունդըմ օսկի է գտնել...Օսկին չիղեն, հըմը իրա գովական թագվորին մարդուն էլ է ըղտեղեն գտել, բայց խեղճը արևը շուտ բաշխեց գնաց: Աշես՝ ընչի՞՞ մեռավ...:

Առավոտ կանուխ դարտակ ձեռով ռաստ գալու տեղ, հիդկըվա կողմ, շների հետ վաստըկած, դեմըս ելնեիր էլի, Զոփուզի տիրուհի...Յետո էլ կերթայիր պալատոնց-բալազանդ, էրեխեքի ըսածի պես՝ մայրամուտի շողերի թագն ընդունելու:

Կըսեմ Արուսի շներն էլ իրա բալազանի մեջ կմնան: ճիշտ է, պասպորտ ունեցող շների պես նագուկ, խնամված ու լողցըրած չեն, բայց...Արուսին են. գարգելու չեն, օր գարգես: Մայրի էրեխեքը կխընդան, կըսեն վայթե ըղոնք պագոն ունին, Գարուբ հոպար, օր չես գարգե:

Ըղոնց ինչը՞դ հասկըցընեմ, օր Արուսը հեղինակություն է: Արուսը խաս... բոմժ է: Զիբիլոնցի մոտեն անցնող-դարձող թանգոնց ավտոները սիգնալ տալով Արուսին չեստ կուրան, բայց ինքը թանաղո՛ւ էլ չի էնե՛ ըղոնց կողմը նայե. մրատուիկ՝ ինքն իրա գործին է: Տոն օրերին էս կյանքի ու կռվի յաշիկի կողբուրդը Արուսը իրա հավատարիմ շների հետ թամաշի կկանչե մայլեցոնց. իրա ձևով խրախճանք կենե, թշվառության խրախճանք... Մարդ ու շուն, ցավեն երես առած, իրար հետ կպարեն ու կպարեն: Թամաշի եկած էրեխեքը բան-ման կըթափելն ըսոնց կողմը: Լազվածներն էլ տրնգին կապահովեն, մեկ-մեկ էլ իրանք կմիանան Արուսենց հեքիաթին:

Յեքիաթի չիքիլեն օր հանես էս ամենի վրայեն կմնա ճմռթած, փոստը պլոկած իրականությունը՝ մազը թափած շան պես: Ու էս իրականության մեջ Արուսի ու իրա շների կյանքը ժողովրդի վիճակի տնագն է, ըբը՛:

Մարդու ու շան ընկերություն օր կտեսնիմ, կըսեմ՝ տնագ կյանքի ձեռեն էս ո՛ւր հասանք... Իրար հավասար լծված ենք ու գոյութ-

յան կաշկեն կքաշենք: Էլ ըսպես բանի վրա գյուլլա ինչը՞դ պարպեմ...

Ըսքան բանը մտքիս մեջ տալ-առնելն հետո է, օր պոչերը կկտրեմ-բաց կթողնամ... Ու ըսպես՝ տարին տարու վրա քաղքի մեջ ավելցավ պոչը կտրած շների թիվը: Եվ գըռ ու փըսն էն մասին, թե Գարուբն էս շների պոչի գինը շուտո՛ւնց է կերել, բազի կկանխի հանկըջիս: Ես էլ ըսողի հետ կխնդայի: Շատ անգամ չիղեն, օր շուն գարգող Գարուբը էս եմ: Ու էղ էր լավ: Է՛, աշխարհ, աշխարհ, ձեռ առնողն ու ձեռ առնվողը իրար հետ կխնդան:

Զա՛, մե բանըմ էլ. անցյալ գարուն պոչը կտրած շներիցս մեկը Զորի մայլեն ցըռտել էր: Զանկըջիս դիպավ, օր թուլեքի կեսը անպոչ է ծնվել: Մեկել կեսի պոչերն էլ յանի իմ դսմաթս են: Եղավ օր՝ քիչըմ թիռոշցան, էղ կողմերն կանցնեի թե չէ, կվազեի, կընգնեի՝ հեղկիցս, կիտովտեի, կփաթեթեի ոտներին ու կլիզեի: Օրըմ էլ համբերությունս պրծավ, ըսի.

-Ծո՛, սայլուզցա՞ք... Ես շուն գարգող եմ, ձեզի գարգողն եմ. ընծի ո՛ւր կիրախրեք: Զեռու ընծեն, այ շուն շան որդիք:

Վայթե հասկըցան. կամաց-կամաց քաշվան-գնացին. խելքի էգան...

(Կըրնա՞ գեղով եկած երախտագիտություն կա՞ խաբար չեմ): Յետո էլ ընծի-ընծի կխոսիմ, կհամոզեմ՝ կտրած պոչով շներն ավելի սիսոնյ կեղնին, ավելի խելքոտուկ: Զամ խոսք հասկըցող չեն, համ էլ իրանց շան կյանքը ի՞նչըդ կուզեն, կվայելեն, ում կուզեն... կզգեն: Իրանք գիղեն Երբ ում: Լուսնահաչը իրանց հըմար լազա՞ք... ու շնախաղն էլ խո կյանք է գիբիլոնցի բկին: Օսկըրի հըմար կռիվը անուշ արևի տակ ուրիշ իմաստ կստանա... Մենք է, օր չենք հասկըրնա ըղոնց շնային խելքը: Մեզի էլ կթվա, թե էս շներն մագ պոկելն էլ է քյար:

Վերջը իմս ըսեմ. շան աչքերի մեջ ինչը՞դ նայեմ, ինչը՞դ հասկըցնեմ, օր վերջը էգել է ու իմ ձեռով է էգել: Ինչը՞դ ըսեմ՝ Ես եմ շանսատակիդ տերը: Իմացած բան է՛ էս կյանքում շունը սատկըցողը քաշ կուտա: Կյանքի լեղու դեմ աչքերդ ինչը՞՞վ փակեմ. էղ լավությունը ինչը՞՞դ էնեմ:

Ես հարցերը կկտրեցնե ուղեղս: Աչքերս կփակեմ... շնի օռնոցը հանկըջիս մեջ գիշերվա մժին ընծի ձեռ կուտա, կստիպե, օր ըսե՛մ, խոստովանի՛մ...

-Ես ի՞նչ մարդ ես, այ շուն, ախր էս ի՞նչ մարդ ես... Թատըմ երկուս էլ օր խմած էղնեի, հետո ինչը՞դ կհաչայի... Շուն կա, օր իսկական հարալեզ է. յարեթը լիզելով՝ կլավցընե...

Զըմը իմ յարե՛քս... Զետո էլ կըսեմ աֆերիստ մարդ է շուն գարգող Գարուբը,

բայց ըսողները չիղեն, թե շներին ինչը՞դ կսիրեմ: Ախր շատ սիրուն են էղ անտեր քոթոները:

Ես գիշեր էրազըմ տեսա: Յանի Բոշի սադի մեջ էի. ընտեղ անցուր հավուզըմ կա, մեջը՝ չփլաղ աղջկան քանդակ: Մեկ էլ ուրիցի ուրիցի՝ տեսնիմ Վզոն էգավ, կայնավ էղ քանդակի դեմը, աշե՛ց, աշե՛ց, հագի պենջակը հանեց, քցավ էղ չփլաղ աղջկա ուսերին: Գարգրի՛ էղ ի՞նչ կենես, Վզո՛: Ըսավ՝ բիղրան չմարի՛: Էղ վախտ աշեմ՝ լի՛քը շուն հավաքվավ մեր կողք ու բուրդը: Ընծի, Վզոյին ու էս աղջկան կալ-մեջ էրին: Շատըցա՛ն, շատըցա՛ն ու սկսին տոճիկ գարգել. խո չեն պարե, խո չեն պարե...Քանի կերթա, շնապարը կուժեղնա: Գլոխս ինչխոր թե պատվավ: Ձեռս քցի շներին, օր ըսոնց պարը կայնըցնեմ: Որին կկանխեմ, պոչը... հաց կդառնա, որին կկանխեմ՝ պոչը... հաց կդառնա: Ու հացը, էս հացը... կհաչա վրես: Էնպես՛ս կհաչա, օր հաչոցի ձեռեն գարթնա՛ տաք ու պաղի մեջ էի: Ըսի՛ ըսիկ ուրիշ՝ նշան է: Առավոտ կանուխ դեմը կնիկմարդ ելնելուց գեշ նշան:

Զըմ է՛ս է շան մսի գին կյանքիս էրազը: Ինչը՞՞դ կուզեք, հասկըցեք:

Ճաշվա կողմ գանգին թե՛ Երևընեն բողի գան, գործերդ ստուգեն...

(Է՛, տեղական շներին հանրապետական ստուգումներն ի՞նչ բողի էնեն):

...Եկավ Զոբոսը՝ սև պապկեն թևի տակ: Ելանք՝ քաղքով մեկ արխող էնելու: (Զհասկըցա՞ Զոբոսի լեզվով՝ շրջա՞յց էր, թե՛... շնայո՞ւ): Զայիայի դար չհասած գզգզված շունըմ երևաց: Շուտվա ծանոթ էր: Զգացի, օր Զոբոսը գործողության կսպասե: Մտածեցի, օր կրակեմ, հաստատ չի կպնի (առավոտ շուտ դեմս կնիկ է ելել ախր): Ոտիս մագուլի ցավեն կըսացա. պատըռտած կոշիկս վրայեն մաժեցի մատներս: Զետո ուսես իջըրի թվանքը, նշան բռնի... Կրակոցի ձեռը խառնվավ շան օռնոցին... Ըստեղ գիշերվա էրագս հիշի, ու օրվա շան վերջին օռնոցը փաթեթվավ էրագիս: Ուղեղիս ինչ-օր բան չոքավ՝ ցավ-ցընող մագուլի պես:

Մոտիկ գնացինք... «Շունն անպոչ է»,- կարդացի Զոբոսի աչքերի մեջ:

Բացեց սև պապկեն, մեջը ինչ-օր բան նշեց:

Զետու հեռվեն ուղեղիս հասավ տղուս անգիր էրած դասը.

-Չի ուղարկի ոչ մի փայլ մեզ լուսինը հիմա էլ-

Շուն, կարոտի՛ իմ եղբայր, դառնաթափի՛՛ծ իմ ընկեր...

Ամեն ինչին վերջ կա. ուրեմն վերջ էս խաղին: Ըսորից հետո էս տնկոզ քաղքեն բան չբողի պակսի: Մեմակ՝ անտեր էղնելու գզացումը բողի պակսի:





ՆՈՒՐԻ (ԼՈՐԵՏԱ ՍՈՒՐԱՂՅԱՆ)

ՏԵՆԳ

-1- Ես գիժ էի ավագներ առաջ ու ապրում էի ազատ. արգելաճաղերն ինձ համար լոկ թռչունների երաններ էին մաս-մաս չվող, սերը անմահների հովտից փչող խնկաթաթախ տրոփն էր, աշխարհի բոլոր անիմաստ խոսակցություններից ու մեկի ժպիտից մաղվող հաշիշն ու նինջը... ավագներ առաջ անհուպ շոյանքն էր լարում օդն ու պայթում խոյակների տակ, ու կապո՛ւյտ, կապո՛ւյտ շունչն էր թռչկոտում յասամանների շուրջ... ավագներ առաջ ես Վայրի էի ու ազատ, երբ դեռ մի պոետ չէր հասցրել եռալուսն մարգարեանալ մինչև աքաղաղի կանչը... Ավագներ առաջ ժամանակը խցանման մեջ ընկավ... երբ վերջապես դուրս գա

այնտեղից, ես անպայման կսպասեմ երրորդ օրվան, որպեսզի հարություն առնեմ... կսպասեմ...

-2- Տարաշխարհիկ երիցուկի ցողից բացակա ու Քուչակից քաղցած, քաղցած պիքսելային-թվային օրաշարքն է միայն գունավոր... (Սև ու սպիտակ լուսանկարների դարաշրջանում է՛լ էր կյանքը սև ու սպիտակ...) Օրերը խցիկի մեջ... սերը խցիկի մեջ... սուրճը խցիկի մեջ... արևը խցիկի պատերին լողաճած... (մտքերը... էնտեղ մտքեր չկան) Ես գնդածն Անբռնելի՜ն՝ իմ սահմաններում պտտվող անվերջ, անվերջ, անվերջ, մինչև վախճանը իմ, բայց ոչ նրա... ու ասկետական տենդն այս համր ու անմխիթար իմ տապանում թայտացող, թևանցուկ լուսանկարվում են ժպտալով ինձ... -Այ թե «կինիկ»-ները կնախանձեին ձեզ,- քննադատեց մի միտք՝ տակառին նստած... -3- Երկաթե թռչունների կռիվն է շառաշյուռով թափվում գլխիս, ճզմում ու ձևախախտում մտքերս... բայց դու անհոգ եղիր, էնտեղի քո բունկերն ապահով է, քեզ բան չի լինի... երրորդ լուսինն է

արդեն, ինչ պատերից առարկաներ են աճում... սրանք խոսել էլ գիտեն ու պահանջում են, որ անքնությամբ ջրեմ իրենց... գլխաֆուլյատ ... անննջություն... տենդապար... կարոտախտ... Ես բրուտոսակերպների փաղանգներն ու այրուծին արդեն երրորդ լուսինն է, ինչ վերջնագիր են ներկայացրել... բայց դու անհոգ եղիր, կոլապսում քո բունկերն ապահով կլինի, քեզ ոչինչ չի սպառնա...

-4- Լսիր, սիրելիս, մեր Տապանը ճեղքել է, ու էլեգիաների աղի շիթերն արագորեն սողոսկում են ներս, հասնում մահճակալիս ոտքերին. ամենուր դրանց թթու հոտն է տարածվել... կարկատել է պետք անհապաղ... այդ ես վախենում եմ դրանցից... այդ մենակ ո՞նց եմ կարկատելու... այդ ես պուճուր-մուճուր եմ... իսկ էս գրողի տարած Տե՛նդը... եթե դու չօգնես, կբռնեմ ու կկաշեմ պատերին, և եթե հրդեհ չբռնկվի, եթե չողջակիվենք, եթե վերջին տապանը չկործանվի դեռ գագաթին չհասած ու ջրջվեն ապագայից բոլոր սուրբ գրային էջերը՝ մեր գրվելիք պատմության... և եթե հավատանք, որ Ֆատուհը, պանրի ու ծիտրոնի բրդուճը կիսատ թողել, ու իմ բոյին մուրճն առած վազել է մեզ օգնության, ապա գուցե հաջողվի՞ գողել

բացված ճեղքը մուրճով ու Վայրի ջերմությամբ... Սիրելիս, մեր Տապանը ճեղքել է, և այնտեղից էլեգիաների ծայրն է հորդում ներս... պետք է մի բան անենք, ես վախենում եմ անշարժությունից...

-5- Իմ ավեգորիկ սերն ու Քո էքսցենտրիկ կիրքը նստած իրար կողք ճռռոցով դանդաղ թիթեռ են խազում միմյանց ներվերի վրա ու ժպտո՛ւմ... իմ էքսցենտրիկ կիրքն ու Քո ավեգորիկ սերը շփոթել են տեղերը... խայտառակվեցինք... բայց աննկատ վերադիրքավորվում են ու շարունակում թիթեռել ներվերը միմյանց... քո հպարտ մեմոյունն ու իմ սառցե վեհությունը սրում են մեզ սրիչով ու հետևողականորեն խեղդանալի անում ճմռթված սպիտակ թղթերին՝ երկու տարբեր ձեռագրերով... Լսիր, սիրելիս, արի վերջապես իմ ավեգորիկ սիրուն և Քո էքսցենտրիկ կրքին միասին ուղարկենք գրողի ծոցը, հա՛... չէ՛ գրողների...

-6- Ես քարանձավային փոքր մարդուկներն ականջներիս մեջ կրակ են արել ու միս են խորովում աղմուկով, ասեք նրանց, որ լեռնեցուս բարձունքներում, մինևույն է կրակի ջերմաստիճանը 100° չի հասնի, 42°-ն ամենաբարձրն է... ասեք, թող չաղմկեն,

ախր ես իմ Վայրիի մասին եմ մտածում, չէ՛... Երկնքի տակ եմ պառկած, բոլորից վերև... ու աստվածներն ինձ հետ են խոսում... անձրևով... ասեք նրանց, որ իրենք էլ են խանգարում, ախր մտածում եմ, չէ՛...

-7- Դրսում երկինք է... դրսում ջրհեղեղ է... դրսում պանդեմիա է... իսկ ես իմ 7 հարկանի տապանով լողում եմ ու մտածում Վայրիիս մասին... Եթե մույնիսկ աղավնին հետ չգա՝ ծիթեմու ճյուղը կտցին ու չասի, որ աշխարհում մի ոտնաչափ հողակտոր է ազատվել Իմ ու Վայրիիս խաղաղ գոյակցության համար...

Եթե մույնիսկ մինչև վերջ էլ չհասկանամ, թե ինչու է ծիթեմին գերադասելի յասամանից... Եթե մույնիսկ քերթողներն ու պատմագիրներն երբևիցե հերքեն մեր գոյությունը ջրհեղեղից, պանդեմիայից ու մեր աստվածային կարճ միացումից առաջ... մինևույն է, իմ տապանի 7-րդ հարկում քո մասին մտածելիս ջերմությունս բարձրանում է աստվածների մոտ...

հետո ավելի վերև...



ԱՊՐԵԼ՝ ՄՊԱՍԵԼՈՎ ԵՐԱՋՆԵՐԻ ԾԻԼ ՏԱԼՈՒ ԺԱՄԻՆ

Մշակույթը ծաղկեցնելու իր փորձով հունիսի 25-ին Գյումրու գեղագիտության ազգային կենտրոնի հյուրն էր Գրիգոր Մաչանենցը: «Որպեսզի Գրիգոր Մաչանենցը Բաբախանյան ստեղծագործողին հնարավոր լինեք արվեստասերների հետ առավել

անմիջական միջավայրում շփվել ու իր խոհերն արտահայտել, նախածեռնեցինք նրա հանդիպումների շարք կազմակերպել Գյումրու քաղաքում: Ու բնականաբար, պատահական չէր, որ այդ հանդիպումների մեկնարկը տրվեց Վարպետաց քաղաք Գյումրիում»,- մշեց բանաստեղծուհի Գրետա Ալեքսանյանը Գյումրու գեղագիտության ազգային կենտրոնի դահլիճում կայացած գրական ցերեկույթի բացումն ազդարարարելով: Գր. Մաչանենցը ծնվել է Արմավիրի մարզի Գայ գյուղում: Ստեղծագործողի նրա էությունը բազմաշերտ է՝ բանաստեղծ, գեղանկարիչ, լուսանկարիչ, քանդակագործ, կուլաժիստ, բայց և իր խոսքերով ասած, աշխարհում մի համեստ անկյուն ակնկալող, որտեղ հնարավոր կլինեք եր-

գել բարձրաձայն ու լացել հոգու երգը... Արվեստի նվիրյալ, ով կուզեր չհիասթափվել մարդ լինելուց ու լալ, հեկեկալ անկատարության իր առեղծվածից: Արվեստագետի համար Գյումրին խտացված իմաստությունների քաղաք է, ու ինքն առանձնակի պատիվ է համարում շփումը գյումրեցիների հետ աշխարհի մինևույն անկյունում: Շփում անկեղծ բառերով, իսկ նրա համոզմամբ՝ «Բառերը տաճարներ են, որտեղ գիշերուզօր պետք է աղոթել»: «Եթե ես ապրեի կանոններով, չէի լինի այն, ինչ կամ,- ասում է նա,- այժմ երբ ես ինձ մայրում և տեսնում եմ այն-պիսին, ինչպիսին կամ, որոշակի բավարարվածություն զգացում եմ ունենում: Բանաստեղծական հինգ ժողովածուների հեղինակն այժմ աշխատում է «Մարկետինգ

առանց կանոնների» գրքի վրա ու այն շատ է կարևորում: Ըստ Մաչանենցի՝ մարկետինգի գործոնը հաճախ անտեսվում է կամ առանձնապես չի կարևորվում հենց իրենց՝ արվեստագետների կողմից, մինչևդեռ ինքը համաձայն չէ ընդունված այն կարծիքին, թե լավ արվեստագետը պիտի սովորած լինի, որ արժեքավոր գործեր ստեղծի, ընդհակառակը, իր խորի համոզմամբ, արվեստագետն անպայման պետք է իրացնի այն, ինչ ստեղծում է: «Ես չգիտեմ, թե աշխարհի դարդն ուսերին վերցրած արվեստագետի նկարագիրը ո՞ր ժամանակներից է եկել կամ գուցե մի՞շտ է եղել այդպես, բայց ես դա չեմ ընդունում: Այնուհանդերձ, կարող է նաև հարց ծագել, թե արվեստագետն ի՞նչ գործ ունի իրացման հետ»:

Անշուշտ, Մաչանենցն ընդունում է, որ արվեստ արարողին ու այն իրացնողին մեկ մարդու մեջ համատեղելը դյուրին գործ չէ, սակայն յուրաքանչյուր արվեստագետ գոնե պետք է կարողանա համագործակցել մի մարդու հետ, ով ունակ է այդ արվեստը վաճառել շուկայում: Գրիգոր Մաչանենց-արվեստագետի կարծիքով, մարկետինգը կախարհանք է ու շատ կարևոր է այն կիրառել իմանալ: Նա հիացմունքով պատմում է. «Բախտ եմ ունեցել լինել Սերգեյ Փարաջանովի աշակերտը, նրա դասերին բավականաչափ խորհուրդներ եմ լսել, բայց դրանք զուտ լսելը բավական չէ, պետք է նաև կարողանալ հեղուկի պես կուլ տալ: Խտացված խոսքն էլ իր կախարհանքն ունի»:

Սամվել ԳՈՒՆԱՆՅԱՆ

ՀՈՒՆԻՍՍԵԿՅԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄ

Հետաքրքիր ու ջերմ անցավ Գյումրու «Ձյունիկ» մանկապարտեզի սաների հանդիպումը բանաստեղծ-արձակագիր Արմենուհի Մխիթարյանի հետ: Գրողը շնորհավորեց աշխարհի բոլոր ծագերում ապրող երեխաներին՝ մաղթելով առողջություն, անհոգ

մանկություն: Առանձնակի ընդօժեց, որ չնայած ծնողի համար տարին տասներկու ամիս «Հունիսի 1» է, բայց բոլոր մեծերը մեծ սիրով են այս տոնը նվիրում փոքրիկներին: Ա. Մխիթարյանը երեխաների համար ընթերցեց Դ. Ք. Անդերսե-

նի «Թիթեռը» և ժամանակակից մանկագիր Դավիթ Մուշի «Ի՞նչ եղավ ամառը» հեքիաթները: Նա տպավորված էր երեխաների վերլուծական մտքով ու պայծառ ընկալմամբ, որը, իհարկե, մանկավարժների ու ընտանիքների սերտ համագործակցության ու

ջանքերի արգասիք է: Թող խաղաղությամբ բացվեն մեր մանուկների բոլոր առավոտները, և թող միշտ տոն լինի նրանց կյանքում. այս էր հանդիպման ուղերձը: Նունե ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

Հրատարակված է ՀՀ ԿԳՄՍ նախարարության աջակցությամբ:

Լրատվական գործունեությունն իրականացնող Հայաստանի գրողների միության Շիրակի մարզային մասնաճյուղ: Հասցեն՝ Շիրակի մարզ, Գյումրի, Գորկու 62 Վկայական N 01Բ 001543

տրված է 21.03.2005թ. հեռ. (094) 53 44 64 Խմբագրական խորհուրդ Գլխավոր խմբագիր՝ Ռոզա Հովհաննիսյան

Համակարգչային ձևավորումը՝ «Էլտորադո Պրինտ» ՍՊԸ Տպագրված է «Ռուբիկ Դարիթյան» Ա/Չ տպագրատանը Տպաքանակը՝ 500 Ծավալը՝ 1 տպագրական մանուկ